Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 2 ՀԱՅՏՆԱՐԿՈՈՊ № 2

Մ. ԱՍԱՏՐՅԱՆ

ԻՆՉ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ ԱՄԵՆ ՄԻ ԱՐՏԵԼԻ ԱՆԴԱՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԱՐԿՈՈՊԻ
ԵՐԵՎԱՆ — 1930

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 2

34.6

Մ. ԱՍԱՏՐՅԱՆ

А 357

ԻՆՉ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ ԱՄԵՆ ՄԻ ԱՐՏԵԼԻ ԱՆԴԱՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԱՐԿՈՒՄԻ

ՅԵՐԵՎԱՆ 1930 Թ.

ՀԱՄՍՈ ԳԻՏ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿՈՍՈՊԻ ՏՊԱՐԱՆ
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 5035բ.
ՏԻՐԱԺ 1000 պ. 110

Մեր յերկրի ժողովրդական տնտեսության, տնտեսական վերակառուցման գործում առանձին խոշոր նշանակություն ունի մանր արդյունաբերությունը։ Հանդիսանալով խոշոր պետական արդյունաբերության լրացուցիչ մի մասը, մանր արդյունաբերությունը նպաստում է ինչպես ապրանքային դեֆիցիտի վերացման, այնպես էլ գործազրկությունը մեղմացնելու գործին։ Տնայնագործական կոոպերացիան, որը մեր պայմաններում հանդիսանում է մանր արդյունաբերության մեջ գրաղված միլիոնավոր արհեստավորների ու տնայնագործների կոլեկտիվացման, նրանց արտադրանքի սպառման ու մատակարարման գործի պլանավորման ու կուրսուր կենցաղային պահանջների սպասարկման մի կենտրոն, մեծ անելիքներ ունի գեռևս Հնդա-

մյա պլանում նախատեսված տեմպի հիման վրա արհեստագործական կոոպերացիան իր ցանցի մեջ պետք է առնի յերկու և կես միլլիոն աշխատողներ, վորից 1.200.000 հոգի աշխատելու յեն ընդհանուր արհեստանոցներում (արտելներ) դրա հետ զուգընթաց ավելանալու յե նաև նրա արտադրանքի բաժինը ամբողջ մանր արդյունաբերության մեջ, հասնելով հնգամյակի վերջում 53,8% 1927/28 թ. 19,4% դիմաց։ Արհեստագործական կոոպերացիայի ցանցի լայնացման հետ միասին, ավելի խոշորանում ու լայն ծավալ են ստանում մասսայական աշխատանքները։ Քանի վոր առանց մասսաների անմիջական ակտիվ մասնակցության անհնար է կյանքում կիրառել մեր առաջ դրված խնդիրները։ Այսոր մեր բոլոր հասարակական, կոոպերատիվ, պրոֆեսիոնալ ու պետական հիմնարկներում և կազմակերպություններում լայն ծավալ է ստացել սոցմրցումը։ Ամեն մի բանվոր այդ հարցում շատ լավ է գիտակցում իր ակտիվության դերն ու անհրաժեշտու-

թյունը։ Լայն աշխատավորական մասսաների մասնակցության յուրացման յուրաքանչյուր ապացույցը հնգամյա ծրագրի 4 տարում իրագործելն է, ակտիվությունն, որ չի տեսել բուրժուական աշխարհը, մասնավոր կապիտալիստական արդյունաբերության մեջ։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ.

Հնգամյա պլանի իրագործման հաջողությունն ապահովելու, ինչպես նաև կուսակցության 16 դ կոնֆերենցիայի կողմից ընդունած շինարարության տեմպերը պահպանելու համար մրցակցության մեջ են մտել մեր յերկրի աշխատավոր բոլոր դասդասածները սկսած ամենախոշոր գործարանից մինչև անհատ բանվորները։ Այս աշխատանքները հավասար չափով վերաբերում են նաև արտադրական կոոպերացիային, քանի որ նրա ցանցում աշխատող մասսաների համար սոցիալիզմի շինարարության

խնդիրները վոչ պակաս չափով հարազատ ու սեփական գործ են։ Ցեվ իրոք, վողջ ՍԽՀՄ-ում շարժման մեջ են արտադրական կոոպերացիայի բոլոր միավորները, սկսած միութենական ողակներից, վերջացրած անհատ արհեստավորներով։ Մասսաների այդ հսկայական շարժումը հանուն կուսակցության գլխավոր գծի իրագործման կարող ե ցանկացած հետևանքներ տալ այն դեպքում միայն, յերբ իրենց իսկ մասսաների հսկողությունը ապահովված լինի ամեն ժամանակ։ Այդ տեսակետից չափազանց կարևոր ու պատասխանատու յե դառնում արտելների արտադրական խորհրդակցությունների անելիքները։ Հանդիսանալով մի կողմից արտելի վարչության ոժանդակ մի կազմակերպություն և մյուս կողմից իրենց իսկ արհեստավորների կողմից ընտրված ակտիվ ու գիտակից աշխատողներից մասսայական հսկողության մի մարմին, արտադրական խորհրդակցությունները պիտի սոցիալիստական շինարարության հենաքարերը դառնան արտելներում։ Համախմբելով

իրենց շուրջը արտելների վողջ ակտիվը, արտադրական հանձնաժողովներին կհաջողվի կյանքում կիրառել այն բոլոր խնդիրները, որոնք դրված են տվյալ արտելի առաջ։ Արտադրական խորհրդակցությունները անպայման պիտի ժամանակից դարձնեն իրենց աշխատանքներին արտելում յեղած փորձված ժամանակ վարպետներին, ուշի ուշով քննության առնեն արտադրության վերաբերյալ նրանց արած առաջարկները ու ամեն կերպ ժամանակն վարչության այդ առաջարկների կիրառման դրծում։ Արտելի աշխատանքների փորձը, նրանց նախաձեռնությունն ու արտադրության հետ անմիջապես կապված լինելը շատ կարևոր են այս կամ այն հարցի լուծման ժամանակ, ուստի և պետք և աշխատանքներին մասնակից անել աշխատողների լայն խավերին։ Արտելում աշխատող ամեն մի արհեստավոր ել հետաքրքրվում և աշխատավարձի, աշխատանքի արտադրողականության, արտադրանքի նմանացման, ռացիոնալիզացիայի, աշխատանքի պաշտպանության և այլ հար-

ցերը։ Անհրաժեշտ է այնպես դնել արտադրական խորհրդակցության աշխատանքները, որ ամեն մի աշխատող հնարավորություն ունենա յերևան բերել իր կողմից նկատած բացերը և առաջարկներ անի նրանց վերացման համար։

Դրա համար անհրաժեշտ է, որ արտադրական խորհրդակցությունում քննվելիք հարցերը նախապես հայտնի լինեն բոլոր աշխատողներին ու մյուս կողմից անհատապես հրավիրել հանձնաժողովի նիստին ակտիվ ու գործունյա տնայնագործներին առանձին հարցերի քննության ժամանակ։ Խորհրդակցության ընդունած առաջարկությունների լրիվ կատարումն ապահովելու համար անհրաժեշտ է կազմակերպել հսկողություն կատարման վրա և տեղյակ պահել այդ մասին խորհրդակցությանը մասնակցած աշխատողներին։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Քանի որ արտադրական խորհրդակցության աշխատանքներն ընդգրկում են

ովյալ արտելի կամ թե ընկերության բոլոր անդամներին, ուստի և հնարավոր չէ հաց-ների նախապատրաստման խնդիրը թողնել այդպիսի մի մասնավոր կազմակերպու-թյանը, կտրելով նրանց ամեն տեսակի աշ-խատանքներից։ Դրա համար էլ առանձին կանոնադրությամբ բոլոր արտադրական ձեռնարկներում գոյություն ունեն արտադրական հանձնաժողովներ։

Արտադրական հանձնաժողովները կազմվում են ովյալ արտելի ցեխերի ներկայացուցիչներից՝ ամեն ցեխից մեկ հոգի և եթե այդ ներկայացուցիչների թիվը 10 հոգուց ավելի է, այն դեպքում հանձնաժողովն իր միջից ընտրում է 3 հոգուց բաղկացած մի բյուրո՝ վարչության անդամներից մեկի ղեկավարությամբ։ Բյուրոն ղեկավարում է արտադրական հանձնաժողովի բոլոր աշխատանքները։

ԻՆՉ ՀԱՐՑԵՐ Է ՔՆՆՈՒՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Արտադրական խորհրդակցությունը քննության և առնում արտելի արտադրա-

կան գործունեությանը վերաբերող բոլոր խնդիրները։ Նրա աշխատանքի առանցքը պիտի կազմի արտելի վարչության աշխատանքների ծրագիրը՝ ինչպես ամբողջ արտելի, այնպես եւ նրա առանձին ցեխերի վերաբերյալ։ Խորհրդակցությունն առանձին ուշադրություն պիտի դարձնի վարչության ծրագրում յեղած կետերի կատարման վրա, գլխավորապես հետեւյալ հարցերի նկատմամբ՝ արտադրանքի վորակի բարձրացում, ինքնարժեքի իջեցում, աշխատանքի նպատակահարմար ու արդյունավետ դասավորում, պայքար դործալքումների և դեպի գործը անտարբեր վերաբերմունքի դեմ, աշխատանքի արտադրողականության բարձրացում, խնայողություն ծախսերի և նյութերի նկատմամբ և այլն։ Այս բոլոր հարցերը մինչև արտադրական խորհրդակցություններում լուծվելը, նախապես քննության ե դրվում մինչև 50 անդամ արտելներում—վարչության նիստերում՝ վերատուգիչ հանձնաժողովի մասնակցությամբ, իսկ 50 անդամից ավել ունեցող արտելնե-

բում — արտադրական հանձնաժողովի նիստում։ Այդպիսով, արտելի լայն արտադրական խորհրդակցությունում քննության են առնվում ընդհանուր բնույթ կրող հարցեր։ Բայց կան և հարցեր, որոնք վերաբերվում են միայն արտելի այս կամ այն ցեխին, ինչպես օրինակ՝ ջուլհակների արտելի մասրա լցնողների ցեխը արտադրության համար անպետք թել և տալիս (կոճը անկանոն և լցված, թելը շատ կապեր ունի և այլն), կամ թե թել մանողների ցեխը շնորհիվ աշխատակիցների անուշադիր վերաբերմունքի վատ թել և տալիս, (թելը պահանջածից հաստ և կամ թե բարակ է և շուտ կտրվող, ունի շատ խուլեր և այլն)։ Վերցնենք նաև կոշկակարական արտելը։ այստեղ կարող են լինել հետևյալ թերությունները՝ գակրոյնի ցեխը չի տալիս պահանջված ձևի ու չափի գակրոյկա կամ թե մաշակարների ցեխը վատ և աշխատում ու ցածր վարակի արտադրանք և տալիս։ այսպիսի օրինակներ կարելի է բերել բոլոր արհեստների գծով բուն գանազան ցեխերի։

Այստեղ մի բան պարզ է, որ մի ցեխի վատ աշխատանքը անմիջապես ազդում է արտելի ընդհանուր գործին։ Ահա առանձին ցեխերում նկատվող բացերը վերացնելու համար հրավիրվում են արտադրական խորհրդակցություններ նաև ըստ ցեխերի, քանի որ այդ ցեխերի աշխատողները ավելի լավ կարող են գտնել վատ աշխատանքի պատճառներն ու միջոցներ առաջարկել նրանց վերացման համար։

Ինչպես ընդհանուր արտելի, այնպես էլ առանձին ցեխերի արտադրական խորհրդակցությունների աշխատանքը մասսայականացնելու նպատակով, արտադրական հանձնաժողովն արտելի կուլտ-հանձնաժողովների հետ միասին, ծրագրված ձևով զեղարվեստական ձևավորում է տալիս այդ աշխատանքներին։ Դրա համար կարելի է օգտագործել հետևյալ հնարավորությունները՝

1. Արտելում կազմակերպված յերեկույթների ծրագրի մեջ մտցնել նաև արտադրական խնդիրները.

2. Կարմիր անկյունում կախել դիագրամներ արտելների նվաճումների ու թերությունների մասին.

3. Պատի թերթում հաճախ լուսաբանել արտադրական խորհրդակցության աշխատանքները.

4. Կազմակերպել փոքրիկ գրադարան Հայտարկոոպի կուլտ յե/բաժնի ցուցումներով վառ վրակի, անբարեխիղճ աշխատողի մատնավարության վրա.

Միայն այն դեպքերում արտադրական խորհրդակցությունը կկարողանա նպաստել արտադրության բոլոր հարցերի հաջող լուծման, երբ այդ աշխատանքներին կլծվեն բոլոր ակտիվ ուժերը սկսած արտելի տեխնիկական աշխատողներից ու վերջացրած դեկավար ապարատով ու մասնագետներով։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԵԼՆԵՐՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1, Արտելներում արտադրական խորհրդակցությունն կազմակերպվում է տվյալ

արտելի արտադրության բնույթից յելնելով, ըստ վորում այդ խորհրդակցությունները պիտի կազմվեն հետևյալ տիպի արտելներում.

ա) գործարանային տիպի, բ) խառն տիպի և գ) այն արտելներում, վորի անդամները վարչությունից հեռու զանազան գյուղերում ցրված աշխատում են։

2. Իոլոր արտելների արտադրական խորհրդակցությունները հանդիսանում են խորհրդակցական մարմիններ, վորոնք նըպատակ ունեն արտելի շարքային անդամներին աշխատանքի լծելու միջոցով ուժանդակել վարչությանը նրա առաջ դրված հարցերի լուծման գործում։

Արտադրական խորհրդակցության բոլոր վորոշումները ուժի մեջ են մտնում և իրագործվում են արտելի վարչության կողմից հաստատվելուց հետո։

3. Արտադրական խորհրդակցությունը հրավիրվում է արտելի վարչության կամ թե արտադրական հանձնաժողովի (յեթե այդպիսին գոյություն ունի) վյալ արտե-

ում) նախաձեռնությամբ։ Խորհրդակցությունները կարող են հրավիրվել նաև արտերի առանձին անդամների նախաձեռնությամբ, յեթե միայն այդ մասին վարչությանը դիմում ներկայացվի արտերի անդամների ամբողջ կազմի 2/3 դից վոչ պակաս, այն ել խորհրդակցությունը հրավիրելուց մեկ շաբաթ առաջ, իսկ վարչությունը պարտավոր է դիմումը ստանալուց մեկ շաբթից վոչ ուշ հրավիրել խորհրդակցություն։

4. արտադրական խորհրդակցությունը քննվելիք հարցերն առաջադրում է վարչությանը, արտադրական հանձնաժողովի կամ թե առանձին անդամների նախաձեռնությամբ։

Նախ քան այդ հարցերը արտադրական խորհրդակցությունում դնելը, նախապես նրանք քննության են յենթարկվում վարչության կամ արտադրական հանձնաժողովի նիստերում։

5. Արտադրական խորհրդակցությունում նախագահում է արտելի վարչության

նախագահը կամ թե վարչության այն անդամը, որը հսկում է արտադրությանը։

6. Արտադրական խորհրդակցությանը կարող են մասնակցել նաև արտելի աշխատակիցները խորհրդակցական ձայնի իրավունքով։

7. Արտադրական խորհրդակցությունների աշխատանքն ընթանում է պլանային կարգով, ըստ որում խորհրդակցությունները հրավիրվում են ոչ պակաս, քանյերբեք ամիսը մեկ անդամ։

8. Արտադրական խորհրդակցությունների բոլոր առաջարկների վերաբերյալ արտելի վարչությունը որոշակի որոշումներ է կայացնում, որոնց մասին տեղեկացնում է արտելի առաջիկա ընդհանուր ժողովին։

9. Բոլոր արտադրական խորհրդակցությունների արձանագրությունների պատճենները անպայման պետք է ուղարկվեն կոոպերատիվ միության կազմ. բաժնին։

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՏԻՊԻ ԱՐՏԵԼՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Գործարանային տիպի արտելներում արտադրական խորհրդակցությունները հրավիրվում են կամ ընդհանուր արտելային մասնակցությամբ բոլոր անդամների կամ ցեխային-մասնակցությամբ միայն ցեխերի աշխատողների։

11. Խորհրդակցություններում քննվելիք հարցերի շարքին են պատկանում արտելի վարչության աշխատանքի ծրագիրը ինչպես ընդհանուր արտելի այնպես և նրա առանձին ցեխերի նկատմամբ, այդ ծրագրի կատարման արդյունքները, աշխատանքի արտադրողականության բարձրացումը արտադրության տեխնիկայի բարելավման ու ներմուծման, արտադրանքի վրակի բարձրացում և ինքարժեքի իջեցում, արտադրության ռացիոնալիզացիա, պայքար գործարքումների և պրոստոյների դեմ, հում նյութերի, կիսաֆաբրիկատների, վառելիքի խնայողություն, աշխատանքի պաշտպանու-

թյուն, աշխատանքի կազմակերպումն, աշխատանքի սանիտարական պայմանների բարելավումն, դժբախտ դեպքերը կասեցնելու միջոցների մշակում և այլն։

12. Ընդհանուր արտադրական խորհրդակցություններում քննվելիք հարցերը նախապես պետք է վերամշակվեն։

1/50-ից պակաս անդամ ունեցող արտելներում, վարչության նիստում վերբատուգիչ հանձնաժողովի հետ միասին։

2/50-և ավելի անդամ ունեցող արտելներում արտադրական հանձնաժողովներում։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

13. Արտադրական հանձնաժողովները կազմվում են ցեխերի մեկական ներկայացուցիչներից։ Արտադրական հանձնաժողովները նախապատրաստում և մշակման են յենթարկում բոլոր այն հարցերը, որոնք դրվելու յեն արտադրական խորհրդակցության։ Այդ խորհրդակցությունները գլխավորվում և հրավիրվում են վարչության այն անդամի կողմից, որը վարում

և արտելի արտադրությունը կամ թե նրա տեղակալի կողմից։ Եթե հանձնաժողովի կազմը 10 հոգուց ավելի լինի, նրա կազմից ընտրվում է բյուրո, որի կազմը 3 հոգուց պակաս չի լինելու դլխավորությամբ վարչության անդամի կամ նրա տեղակալի։ Այդ բյուրոն ղեկավարում է արտադրական հանձնաժողովի բոլոր աշխատանքները։

14. Առանձին արտադրական ցեխեր ունեցող գործարանային տիպի արտելներում, արտադրական խորհրդակցությունները կարող են հրավիրվել նաև բուն առանձին ցեխերի, բուն վորում այդ խորհրդակցություններում քննության են առնվելու միայն ավյալ ցեխին վերաբերող հարցերը։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038175